ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն **Պատմաբան–իրավագետ**

Թեմա **«Անկախության հռչակումը»**

Կատարող **Հայրապետյան Քրիստինե Արծրունու**

Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Եփրիկյան Արմինե

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Ուսուցիչ - Քրիստինե Հայրապետյան

Առարկա - Հայոց պատմություն

Դասարան - IX

Դասի թեմա - «Անկախության հռչակումը»

Դասի նպատակները՝

- Արդի ժամանակաշրջանում ՀՀ վարած արտաքին քաղաքականության ուղղությունների և սկզբունքների, ինչպես նաև ներքաղաքական զարգացումների առանձնահատկությունների մասին պատկերացումների ձևավորում:
- Պետության վարած ներքին քաղաքականության ուղղությունների և սկզբունքների առանձնահատկությունների, ներքաղաքական գործընթացների վերաբերյալ պատկերացումների ձևավորում:
- Երրորդ հանրապետության հռչակումից հետո Հայաստանի միջազգային դրության և արտաքին քաղաքականության առանձնահատկությունների ու հիմնական ուղղությունների ընկալում:
- ՀՀ վարած ժամանակակից արտաքին քաղաքական զարգացումների և դրանց արդյունքների արձանագրում և գիտակցում:
- ՀՀ ծավալած դիվանագիտական աշխատանքների և դրանց արդյունքների արձանագրում և գիտակցում:
- Հայաստանի Երրորդ Հանրապետության արտաքին քաղաքական հաղթանակների և անհաջողությունների, դիվանագիտական համակարգի հաջողությունների և թերացումների փաստագրական տվյալների ներկայացում
- 1991–1995թթ. ՀՀ ներքաղաքական զարգացումների և դրանց արդյունքների արձանագրում և գիտակցում:
- 1991–1995թթ. ՀՀ վարած արտաքին քաղաքականության, իրացված դիվանագիտական աշխատանքների և դրանց արդյունքների արձանագրում և գիտակցում:
- Արցախյան հերոսամարտի տարեգրության և տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների իմացություն:
- Քննադատական մտածողության ձևավորում:

- Միջառարկայական կապերի համատեքստում՝ մեդիագրագիտության վերաբերյալ տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների զարգացում:

«Հայոց պատմություն» առարկայի դասի պլանի ձևանմուշ

Դասարանը ՝ IX

Դասի թեման ՝ Անկախության հռչակումը: Արցախյան ազատագրական պատերազմը:

Դասի թեմայի հիմնական հասկացությունները ՝

Պետականություն, քաղաքականություն (ներքին, արտաքին), քաղաքացիական հասարակություն, պատերազմ, հերոսամարտ, հակամարտություն, գաղափարախոսություն:

Ուսումնական ռեսուրսներ

Սահիկաշար. **Անկախության հռչակումը: Արցախյան ազատագրական պատերազմը**

- *Մտքի քարտեզագրման մեթոդով, http://drichard.org/mindmaps/ հավելվածի միջոցով քարտեզագրել՝ ստեղծել տրամագիր՝ անկախության հռչակումը, Արցախյան ազատագրական պատերազմը թեմայի վերաբերյալ:*
- *Քորների, քառաբաժանում մեթոդների և խորհանարդում մեթոդական հնարի կիրառում:*
- *Mentimeter գործիքով ստեղծված բառային ամպ՝ անկախության հռչակումը, Արցախյան ազատագրական պատերազմը թեմայի՝ տարեթվերի, պատմական իրադարձությունների և երևույթների ներկայացում Մեդիադարանի ստեղծում:*

Դասի թեմայի յուրացման վերջնարդյունքը

Սովորողը պետք է

Իմանա՝

Ա մակարդակ – ՀՀ վարած արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները, իրականացվող դիվանագիտական առաքելություններն ու գործընթացները:

Բ մակարդակ – ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարությունը, մարտավարությունն ու հեռանկարները:

Գ մակարդակ – ՀՀ միջազգային հարաբերություններն ու արտաքին մարտահրավերները:

Սովորողը պետք է կարողանա՝

Ա մակարդակ – ներկայացնել ՀՀ արտաքին դիվանագիտական համակարգը, վերլուծել դիվանագետների գործառույթներն ու առաքելությունները:

Բ մակարդակ – պարզաբանել ՀՀ արտաքին քաղաքական ճգնաժամի պատճառները, վերլուծել Արցախյան պատերազմի դրական ու բացասական հետևանքները:

Գ մակարդակ - բացահայտել և մեկնաբանել ՀՀ-ի և միջազգային կառույցների միջև ձևավորված քաղաքական հակասությունների պատճառներն ու դրանց դրսևորման եղանակները:

Դասի ընթացքը

Սովորողների յուրացման արդյունավետության խթանում

Մտքի քարտեզագրման մեթոդով, http://drichard.org/mindmaps/ հավելվածի միջոցով քարտեզագրել՝ ստեղծելով տրամագիր, որով կդասակարգվեն և կտեսակավորվեն ձեռք բերված պատմական գիտելիքները: Կառուցել քարտեզ մեկ մեծ՝ Արցախյան պատերազմի, գաղափարի շուրջ, որից ճյուղավորվում են ավելի փոքր, ածանցված գաղափարները (տե՛ս նկար 1):

Նկար 1. Մտքի քարտեզ



Մտքի քարտեզագրման մեթոդին զուգահեռ կիրառել Քորնելի մեթոդը։

Քորների մեթոդով գրառումներ կատարելու աղյուսակ

ԱՄՍԱԹԻՎ	ԹԵՄԱ
ՀԱՐՑԵՐ	ԳՐԱՌՈՒՄՆԵՐ
ՀԱԿԻՐՃ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	

Ներկայացված աղյուսակի կիրառումամբ.

- հստակ տարանջատել առաջնային տեղեկատվությունը երկրորդայինից, հիմնական տեղեկությունները լրացուցիչ տեղեկություններից, թեմայի առանցքային հարցերն՝ օժանդակ հարցերից,
- գրառումների սյունակում գրառելու կարևոր մտքերը՝ անկախության հռչակման, Արցախյան ազատագրական պատերազմը, գծապատկերների, նկարների, խորհրդանիշերի և այլ նշանների գործածմամբ,
- հարցերի սյունակում պատասխաններ ստանալու ակնկալիքով՝ ձևակերպել առաջացած բոլոր հարցերը,
- հակիրճ բովանդակության սյունակում՝ դասի ավարտից հետո, մի քանի նախադասությամբ ամփոփել ուսումնասիրված նյութը

Linko V6.5 ծրագրի միջոցով էկրանի վրա տեսաշարով սովորողներին ներկայացվում է Երրորդ հանրապետության հռչակման նախադրայալները, ընթացքը, արդյունքը, Հայաստանի միջազգային դրության և արտաքին քաղաքականության առանձնահատկություններն ու հիմնական ուղղությունները, 1991–1995թթ. ՀՀ ներքաղաքական զարգացումները,

Արցախյան հերոսամարտի տարեգրությունը և տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները՝ հաղթանակները, պարտությունները: Քանի որ այդ թեմային վերաբերող պատմական փաստերը շատ են, դրանք հիշելու և համակարգելու նպատակով սովորողներին առաջարկվում է հերթով մոտենալ ակտիվ (smart) գրատախտակին ու մատը սահեցնելով՝ էկրանին ցուցադրված տեքստից դուրս գրել տարեթվերը և լրացնել ներկայացված տեսաշարին զուգահեռ գծագրված ժամանակագրական աղյուսակը:

Օրինակ՝

ՏԱՐԵԹԻՎ	ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ
1988թ. փետրվարի 14-ից	ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը
1988թ. փետրվարի 27-29	Ադրբեջանական իշխանությունները Սումգայիթ քաղաքում կազմակերպեցին հայ բնակչության ջարդ
1989թ. նոյեմբեր	Հայոց համազգային շարժման Վարչության նախագահ ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը
1991թ. ապրիլի վերջին	Խորհրդային զորքերի օգնությամբ հայերի բռնի տեղահանումը Խանլարի շրջանի Գետաշեն եւ մյուս հայկական գյուղերից
	ԼՂԻՄ եւ Շահումյանի շրջանի ժողպատգամավորների

1991թ. սեպտեմբերի 2ին	*միացյալ նստաշրջանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը*

Թեմայի իմաստավորման փուլ

Ուսուցիչը սահիկաշարի միջոցով ներկայացնում է Արցախյան շարժումը և Հայաստանի Երրորդ հանրապետությունը. դասերը, արժևորումները, հեռանկարները: Սահիկաշարը ստորև՝

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐԵՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Հանրահավաք Ստեփանակերտում

1985թ. ԽՍՀՄ-ում հռչակված «վերակառուցման» եւ դեմոկրատացման կուրսը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայության կողմից ընկալվեց Հայաստանի հետ վերամիավորվելու իրական հնարավորություն:

1988թ. փետրվարի 14-ից Լեռնային Ղարաբաղում սկսվեցին համաժողովրդական հուժկու հանրահավաքներ՝ Հայաստանի հետ վերամիավորվելու նշանաբանով:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց խնդրել Ադրբեջանի, Հայաստանի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին, որպեսզի ԼՂԻՄ-ը միացվի Հայաստանին: Այդ արդարացի որոշումը թշնամաբար ընդունվեց թե՛ Ադրբեջանի եւ թե՛ Մոսկվայի կողմից: Այս որոշումն էլ սկիզբ դրեց հայ ազգային-ազատագրական պայքարի հերթական փուլին ***ղարաբաղյան շարժմանը***.

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի ղեկավարություններն առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղան ղարաբաղյան շարժման ճնշմանը:

1988թ. փետրվարի 22-ին Մոսկվայի գիտությամբ Աղդամից 10.000-ոց ադրբեջանական ամբոխը շարժվեց Ղարաբաղի **Ասկերանի շրջանի** հայկական գյուղերի վրա: Սակայն, տեսնելով հայ աշխարհազորայինների ամուր շարքերը, ստիպված հեռացավ:

1988թ. փետրվարի 27-29-ին ադրբեջանական իշխանությունները **Սումգայիթ քաղաքում** կազմակերպեցին հայ բնակչության ջարդ:

Ղարաբաղյան շարժմանը ծանր հարված հասցրեց 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժը:

Ազատագրական շարժման ուժերը միավորելու նպատակով 1989թ. նոյեմբերին ստեղծվեց Հայոց համազգային շարժում կազմակերպությունը, որի Վարչության նախագահ ընտրվեց **Լևոն Տեր-Պետրոսյանը**:

Լևոն Տեր-Պետրոսյան

Օգտվելով շրջափակված Արցախի եւ Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր կացությունից՝ Ադրբեջանը Թուրքիայի ակտիվ աջակցությամբ 1990թ. սկսեց ռազմական հարձակում Հայաստանի սահմանային շրջանների վրա:

1991թ. ապրիլի վերջին խորհրդային զորքերի օգնությամբ բռնի տեղահանվեցին **Խանլարի շրջանի Գետաշեն** եւ մյուս հայկական գյուղերը:

1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ եւ Շահումյանի շրջանի ժողովրդավարների միացյալ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը, որպես անկախ պետություն:

ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց **Արթուր Մկրտչյանը**:

Արթուր Մկրտչյան
(1959–1992 թթ.)

Հայ ազատամարտիկները 1992թ. փետրվարին ուժգին հարձակմամբ ազատագրեցին **Խոջալուն**, որը թշնամու կարեւոր հենակետերից էր:

Արցախյան պատերազմի առանցքային իրադարձություններից է **Շուշիի** ազատագրումը: Հայկական ուժերը Կոմանդոսի՝ զնդապետ **Արկադի Տեր-Թադեւոսյանի** գլխավորությամբ 1992թ. մայիսի 9-ին ազատագրեցին Շուշին, որը արմատական բեկում էր արցախյան պատերազմում:

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ապա ազատագրվեց Լաչինը եւ Հայաստանի հետ ճանապարհը բացվեց, վերացվեց Արցախի շրջափակումը: Հայաստան-Ղարաբաղ ցամաքային կապի ապահովումը արմատական ազդեցություն ունեցավ ղարաբաղյան ազատագրական պատերազմի հետագա ընթացքի վրա:

«Շուշիի ազատագրման 15-ամյակ» հուշադրամ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

1992թ. հունիսին անցնելով հարձակման ադրբեջանական զորքերը ***գրավեցին Շահումյանի շրջանը եւ Մարտակերտի շրջանի մեծ մասը.***

Վերակազմակերպվելով՝ 1993թ. գարնանը հայկական ուժերն անցան լայնածավալ հակահարձակման եւ ազատագրեցին

- Մարտակերտի շրջանի մեծ մասը,
- Աղդամի,
- Քելբաջարի (Քարվաճառ),
- Ֆիզուլու,
- Կուբաթլուի,
- Զաբրաիլի եւ Զանգելանի շրջանները:

1994թ. մայիսի 12-ին Ռուսաստանի միջնորդությամբ եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի մասնակցությամբ կնքվեց զինադադար:

LOGO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1985թ. հռչակված «վերակառուցման» քաղաքականությունը եւ կիսատ-պռատ բարեփոխումներն ավելի խորացրին ԽՍՀՄ-ում տիրող սոցիալ-տնտեսական եւ քաղաքական ճգնաժամը: Օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ազգային հանրապետություններն աստիճանաբար բռնեցին անկախացման ուղի: Հայաստանում այդ գործընթացը սկսվեց ղարաբաղյան շարժման հիմքի վրա, 1989թ. կեսերից:

Այսպիսի իրավիճակում, 1990թ. մայիսի 20-ին տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններ, որում հիմնական տեղերը գրեթե հավասարապես զբաղեցրին ՀՀՇ-ն եւ ՀԿԿ-ն (Հայաստանի կոմունիստական կուսակցություն):

Օգոստոսի 4-ին Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց **Լեւոն Տեր-Պետրոսյանը:**

LOGO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց հանրաքվե ԽՍՀՄ կազմից դուրս գալու եւ անկախանալու հարցով:

Բնակչության ճնշող մեծամասնությունը, այսինքն՝ 2 մլն 43 հազար մարդ (քվեարկության իրավունք ունեցողների 94,39%-ը), «**այո**» ասաց անկախությանը:

LOGO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991թ. սեպտեմբերի 23-ին հանրապետության ***Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն:***

1991թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական ընտրություններ: Ձայների ճնշող մեծամասնությամբ ՀՀ **առաջին նախագահ ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը:**

Լեւոն Տեր-Պետրոսյան

LOGO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը:

Այդ փաստաթղթով ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:

Ընդունվեցին նոր պետականության խորհրդանիշները՝ դրոշը եւ զինանշանը, որոնք առաջին հանրապետության խորհրդանիշներն էին:

LOGO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք **Ալմա Աթայում** նախկին խորհրդային 11 հանրապետություններ՝ Ռուսաստանը, ՈՒկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, ՈՒզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Մոլդովան, Ադրբեջանը եւ Հայաստանը ստորագրեցին **ԱՊՀ** ստեղծման մասին համաձայնագիր:

Դրանով ավարտվեց ԽՍՀՄ փլուզման գործընթացը: ԽՍՀՄ առաջին եւ վերջին նախագահ Մ. Գորբաչովը ստիպված հրաժարական տվեց:

Հայաստանը դարձավ անկախ պետություն:

12

LOGO

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1991թ. վերջերից Հայաստանի Հանրապետությունը սկսեց միջազգային ճանաչում գտնել:

1991թ. դեկտեմբերին ՀՀ-ն ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան եւ այլ պետություններ:

1991թ. դեկտեմբերին ՀՀ անկախությունը ճանաչեց նաեւ Թուրքիան, որը, սակայն, հրաժարվեց հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ դրա համար առաջադրելով մի շարք անընդունելի նախապայմաններ:

1992թ. մարտի 2-ին Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի լիիրավ անդամ, այնուհետեւ անդամագրվեց միջազգային մի շարք կազմակերպությունների:

13

Խճանկար կամ ջիգսո մեթոդի միջոցով իրագործել (տե՛ս աղյուսակ 1)

Աղյուսակ 1

ՓՈՒԼ	*ԳՈՐԾԸՆԹԱՑ*
Պատմական նյութի ուսումնասիրում և տեղեկությունների հավաքագրում	*Սովորողները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետներն ուսումնասիրում են իրենց ենթաթեման և հավաքում տեղեկություններ:*
Աշխատանք փորձագիտական խմբում	Փորձագիտական խմբերի սովորողները վերլուծում, համեմատում, համադրում և հարստացնում են իրենց նյութերը:
Աշխատանք ուսումնական խմբում	Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:
Աշխատանք ների ավարտ	*Սովորողները ներկայացնում են անհատական հաշվետվություն:*
Ամփոփում	Արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Ներկայացնենք դրանցից երկուսը:

«Խճանկար»-1

1. Թեման բաժանել տարբեր բարդության ու հագեցվածության ամբողջական հատվածների:

2. Ստեղծել չորս-հինգ հոգուց բաղկացած համագործակցային խմբեր՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները:

3. Համարակալել համագործակցային խմբերի մասնակիցներին:

4. Տարբեր խմբերում նույն համարները կրող մասնակիցներին միավորել նոր փորձագիտական խմբերում: Յուրաքանչյուր փորձագիտական խմբի տալ առանձին առաջադրանք: Օրինակ՝ եթե պատմական նյութը հատվածների է բաժանվել, փորձագետների 1-ին խումբը կաշխատի նյութի առաջին հատվածի վրա, 2-րդ խումբը՝ երկրորդի և այլն:

5. Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ սովորողները վերադառնում են համագործակցային խմբեր և իրենց խմբին հաշվետվություն տալիս այլ

փորձագիտական խմբում ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև դասավանդողի դերում:

6. Ամփոփիչ փուլն ավարտվում է, երբ համագործակցային խմբերը 2-3 րոպեի ընթացքում իրենց նախընտրած ձևով ներկայացնում են թեման:

«Խճանկար»-2

1. Սովորողներն աշխատում են 4 հոգուց բաղկացած համագործակցային խմբերով: Խմբի անդամներին տրվում են տարբեր փորձագիտական թերթիկներ: Փորձագիտական թերթիկներում զետեղված հարցերը նպատակ ունեն հստակեցնելու ընթերցանության ուղղվածությունը: Թերթիկները տարբեր են, քանի որ հետագայում տարբերակվելու են նաև սովորողների պարտականությունները: Նրանք օգնելու են հիմնական խմբին՝ բազմատեսանկյուն սկզբունքով յուրացնելու իրենց վստահված և փորձագիտական թերթիկում նշված հատվածը:

2. Սովորողներին տրվում է որոշակի ժամանակ՝ ամբողջ նյութը կարդալու համար: Բոլորը պետք է նյութը կարդան ամբողջությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հատվածներին, որոնք պատասխանում են իրենց փորձագիտական թերթիկում նշված հարցերին, ապա կատարեն համապատասխան գրառումներ:

3. Սովորողները վերախմբավորվում են ըստ թերթիկների՝ կազմելով փորձագիտական խմբեր, որտեղ նրանք քննարկում են թերթիկում նշված հարցերը: Յուրաքանչյուր խմբում ընտրվում է քննարկումը վարող անձ: Դասավանդողն այդ ընթացքում շրջում է խմբերում որպես մասնակից և անհրաժեշտության դեպքում կատարում որոշակի պարզաբանումներ:

4. Փորձագետները վերադառնում են իրենց նախնական համագործակցային խմբերը և ընկերներին սովորեցնում փորձագիտական խմբում յուրացրածը: Փորձագետները ոչ միայն զեկուցում, այլև պատասխանում են հարցերին և հավաստիանում, որ բոլորը յուրացրել են տվյալ հատվածը:

5. Վերջին քայլը գնահատումն է: Դասավանդողը կարող է առաջարկել աշակերտներին գրավոր նշել, թե իրենք ինչ ներդրում են ունեցել խմբի ընդհանուր աշխատանքում:

Քանզի թեման առանձնանում է իր հուզական բաղադրիչով, ազգային ինքնագիտակցություն և արժանապատվություն ձևավորող ներգործությամբ, մինչ մեդիա ցանցի կառուցարկմանն անցնելը նոր գիտելիքներ տալ Թուրքիայի հայահալած քաղաքականության, տնտեսական, ազգային ու կրոնական կեղեքումների ու բռնությունների մասին, սովորողներին հանգեցնել ինքնաբուխ պայքարի՝ ժողովրդական վրիժառության գաղափարի ընկալմանը, որն իր արտացոլումն է գտել հայդուկային /ֆիդայական/ շարժման մեջ, այն համադրում է մեր օրերում ընթացող համանման պայքարի՝ Ղարաբաղյան պատերազմի հետ:

Օրինակ՝

Կառուցարկելով և լրացնելով մեդիա ցանցը՝ աշակերտները խորությամբ գիտակցում են, որ իր իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու համար ոտքի կանգնած արցախահայության պայքարը Խորհրդային Միությունում վերակառուցման քաղաքականության անմիջական հետևանքն էր: Արցախահայությունը, չհաշտվելով իր պատմական տարածքներն Ադրբեջանին բռնակցելու և Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության հետ, պայքար սկսեց մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու համար: Շարժման փուլերի, ռազմական գործողությունների ընթացքի, պատերազմում տարած հաղթանակների վերաբերյալ գիտելիքներն ամբողջացնելու նպատակով :

Թեմայի կշռադատման փուլ

Քառաբաժան մեթոդը չափազանց հարմար է շարադրանքի վրա աշխատելիս: Քառաբաժան մեթոդի աղյուսակը ցուցադրել էլեկտրոնային ակտիվ գրատախտակին: Սովորողները, օգտվելով word–ի աղյուսակ գծելու գործիքից, գծապատկերում են աղյուսակն այնպես, որ հորիզոնական և ուղղահայաց վանդակների մեջ մտքերը համապատասխանաբար մուտքագրվեն չորս բաժիններից յուրաքանչյուրում: Ուսումնական նյութն ընթերցելուց հետո սովորողներն առաջին վանդակում, որը կրում է *«Ի՞նչ պատկերավոր տեսարաններ առաջացրեց դասի բովանդակությունը»* վերնագիրը, գետեղում են այն մտքերը, որոնք կպատասխանեն հարցադրմանը: Երկրորդ վանդակում սովորողներն արտահայտում են այն հույզերը, զգացողություններն ու զգացումները, որոնք կպատասխանեն երկրորդ վանդակում ներկայացված վերնագրային հարցադրմանը՝ *«Ի՞նչ էիք զգում դասն ընթերցելիս»:* Երրորդ վանդակում սովորողները գետեղում են այն մտքերը, որոնց միջոցով նրանք կկարողանան իրական կյանքի և օբյեկտիվ իրականության հետ կապել պատմական իրադարձությունները, փաստերն ու երևույթները: Չորրորդ վանդակում սովորողները ձևակերպում են նոր վերնագիր կամ յուրովի խմբագրում դասի վերնագիրը (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Քառաբաժան մեթոդ

Ի՞նչ պատկերավոր տեսարաններ առաջացրեց դասի բովանդակությունը	**Ի՞նչ էիք զգում դասն ընթերցելիս**
-պատերազմի դաշտ	-տխրություն - ապրումակցում

-չքավորություն -Տիգրան Մեծի հաղթարշավի ընթացք հայերի կոտորածի պատկերը -արյուն, մահ, վիրավորներ	-հպարտություն, ուրախություն -ցասում, պատվախնդրություն, վրեժ -վախ, տագնապ, հիասթափություն
Պատմական իրադարձությունների կապը իրական կյանքի և օբյեկտիվ իրականության հետ -Ղարաբաղյան պատերազմ -Սպիտակի երկրաշարժ - Շուշիի ազատագրում -Սումգայիթի և Բաքվի ջարդեր -Ապրիլյան քառօրյա պատերազմ	**Դասի նոր վերնագիրը** -Հայերի ինքնորոշման իրավունքը -Հերթական փորձությունը -Հարսանիք լեռներում -Ցեղասպանությունը շարունակվում է -Գոյամարտ

Այս մեթոդները սովորողների համար լավ հնարավորություն են՝ նյութը բազմաբնույթ ուսումնասիրության ենթարկելու, միաժամանակ իրենց զգայական իմացությունը (эмоциональный интелект), վերլուծական մտածողությունն ու մեդիա հմտությունները զարգացնելու համար: Դասավանդողն այս իրավիճակում սովորողների գործընկերն է՝ իրականացնելով միասնական, փոխներգործուն, ակտիվ բացահայտումներ, հետազոտություններ, եզրահանգումներ և այլ անհրաժեշտ գործողություններ:

Խորանարդում մեթոդական հնարը կիրառելով նախապես յուրաքանչյուր սովորողի էլեկտրոնային հասցեին ուղարկվում է ուսումնասիրվելիք հիմնախնդրին վերաբերող նյութերը, որոնք նրանք բեռնում են և տեղադրում համակարգչի աշխատանքային պատուհանին (desctop): Օգտագործելով էլեկտրոնային ակտիվ գրատախտակի գործիքները՝ էկրանի վրա նախապես բացվում է գունավոր խորանարդը և ցուցադրվում սովորողներին: Հաջորդիվ սովորողները դասավանդողի հետ միասին քննարկում են ուսումնասիրվող թեմայի առանցքային հերոսներին, նրանց գործողությունները, գաղափարներն ու դիրքորոշումները:

Այդ ընթացքում դասավանդողը, շարժելով խորանարդը, էլեկտրոնային գրատախտակի վրա ցույց է տալիս նրա նիստերը, որտեղ անհրաժեշտ է նկարագրել ուսումնասիրվող թեմայի բովանդակությունը: Դա կարելի է և նույնիսկ ցանկալի է անել Paint (Wizardbrush) ծրագրով պատկերված խորհրդանիշերով, այնուհետև կատարել համեմատություններ, զուգորդումներ, վերլուծություններ՝ ներկայացնելով կողմ և դեմ փաստարկները, կիրառելով դրանք սեփական տեսակետը հիմնավորելու նպատակով: Խորանարդումը կիրառելիս գերադասելի է շարժվել պարզից դեպի բարդ սկզբունքով: Նշենք նաև, որ բոլորովին էական չէ խորանարդի նիստերի հերթականությունը, սովորողն ինքն է ընտրում, թե որ հարցադրումից սկսի ներկայացնել իր խորանարդը (տե՛ս գծապատկերը):

Գծապատկեր

Սովորողներին հանձնարարել հավաքել և կազմել Արցախյան շարժմանն ու պատերազմին նվիրված չորս տեսասկավառակներից և քսան առավել հատկանշական հետևյալ ֆիլմերից բաղկացած մեդիադարան՝

ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ԱՌԱՋԻՆ ՖԻԼՄ 1 13 տարի անց
ՖԻԼՄ 2 Վերածնունդ
ՖԻԼՄ 3 Ի՞նչ ենք մենք ուզում
ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ԵՐԿՐՈՐԴ ՖԻԼՄ 4 Քաղաքացիությունը՝ փախստական
ՖԻԼՄ 5 Ամուր ընկույզ
ՖԻԼՄ 6 Ճակատագիրը թակում է դուռը
ՖԻԼՄ 7 Ղարաբաղյան հեքիաթ
ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ԵՐՐՈՐԴ ՖԻԼՄ 8 Սպեկտր
ՖԻԼՄ 9 Քամանչա-նամե
ՖԻԼՄ 10 «Էգո» ոճով
ՖԻԼՄ 11 Կովկաս Շուշին վրանի տակ
ՖԻԼՄ 12 Դաունլոդ
ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ ՉՈՐՐՈՐԴ ՖԻԼՄ 13 Իմ թշնամին՝ իմ ընկերը
ՖԻԼՄ 14 8-րդ կիլոմետրին
ՖԻԼՄ 15 Զարմուհին Կովկասից

ՖԻԼՄ 16 Կատարսիս
ՖԻԼՄ 17 Բոլոր ֆիլմերն էլ սիրո մասին են

Mentimeter գործիքով ստեղծված բառային ամպ՝ անկախության հռչակումը, Արցախյան ազատագրական պատերազմը թեմայի՝ տարեթվերի, պատմական իրադարձությունների և երևույթների ներկայացում (հեղինակ՝ Արմինե Եփրիկյան)

Հղումը ստորև՝
https://www.mentimeter.com/s/dd9674a42a9a94337e253623d472065d/939f768377bb/edit

Ստորև ներկայացված սանդղակի միջոցով ամփոփվում են սովորողների յուրացրած գիտելիքները:

ՀԱՍԿԱՑԵԼ ԵՄ ԸՄԲՌՆԵԼ ԵՄ

ՅՈՒՐԱՑՐԵԼ ԵՄ

Գնահատում

- Համապատասխան Ա, Բ, Գ մակարդակները բնորոշող չափանիշներին:
- Հարցադրումներ անցած թեմաներից:
- Քարտեզի իմացություն, քարտեզագրման կարողություններ:

Հետադարձ կապ (անդրադարձ)

- Կատարած աշխատանքների արձանագրում:
- Դասանպատակի իրացում:
- Առաջադրանքների կատարում:
- Քննարկման ենթակա հարցերի առաջադրում:
- Գիտական աղբյուրների իմացություն:

Նոր հանձնարարություններ

- Մեկնաբանել և համակարգել Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմնահարցի շուրջ ծավալված բանակցային գործընթացները:
- Դասակարգել միջազգային պայմանագրերի վավերացման փուլերն ու ընթացակարգերը:
- ՀՀ դաշնակից և հարևան պետությունների տարածքների քարտեզագրում:

Գրականություն

- ***Унт И.,*** *Индивидуализация и диференцация обучения, М., Педагогика, 1990, 192 с.*
- ***Шадриков В. Д.,*** *Учебный план и личность учителя, М., изд–во "Педагогика", 1993, 177 с.*
- ***Шацкий С. Т.****, Педагогические сочинения, М., АН. РСФСР., т. 4. 1995, 328 с.*
- ***Шемшурина А. И.,*** *Азбука вечных истин (в помощь педагогам и руководителям обьеденений учащихся, осуществляющих дополнительное образование в области христианской культуры, этики и морали, М., АЛЦ – В, 2000, 279 с.*
- ***Щуркова Н. Е.,*** *Педагогическая технология, М., Педагогическое общество России, 2005, 256 с.*
- ***Эльконин Д. Б.,*** *Избранные психологические труды, М., Изд.–во Педагогика, 1989, 560 с.*
- ***Эпштейн Д. А.,*** *Опыт дифференцированного обучения в средней школе // Педагогика 1960. N 8, с. 16–22.*
- ***Якиманская И. С.,*** *Личностно–ориентированное обучение в современной школе, М., 1996, 347 с.*
- ***Allington, R. and Cunningham, P.*** *(2004). Classrooms that work. Boston: Allyn and Bacon.*
- ***Buehl D. (2006).*** *Classroom strategies for interactive learning. Delaware: International Reading Association.*
- ***Blocking Effect".*** *Journal of Personality and Social Psychology. 61 (3): 392–403.*

- ***Elliot Aronson*** *(1978). The jigsaw classroom. Beverly Hills: Sage.*
- ***Elliot Aronson, S. Patnoe*** *(1997). Cooperation in the classroom: The jigsaw method. New York: Longman.*
- ***Elliot Aronson*** *(2000). Nobody left to hate. New York: Henry Holt.*
- ***Furnham, A., & Yazdanpanahi, T.*** *(1995). Personality differences and group versus individual brainstorming. Personality and Individual Differences, 19, 73-80.*
- ***Jonson D. W., Jonson R. T.,*** *Cooperative learrning: One Key to Computer Assis ted Learning // The Computing Teacher, 1985, October, p. 11–13.*
- ***Lestik, M., & Plous, S.*** *(2012). "Jigsaw Classroom". Retrieved October 24, 2012, jigsaw.org*
- ***Mc Dermott, M. J.*** *(2012), Using graphic organizers in preschool, Teaching Young Children, 5(5), 29–31.*
- ***Michael Diehl,*** *"Productivity Loss in Idea-Generating Groups: Tracking Down the*

Perkins, D. V., & Tagler, M. J. (n.d.).

http://drichard.org/mindmaps/:

https://www.futurelearn.com/

http://drichard.org/mindmaps/